

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
Պատմության օլիմպիադայի հանրապետական փուլ (2019-2020 ուստարի)
9-րդ դասարան (տևողությունը՝ 180 րոպե)

ա) Հայոց պատմություն (20 միավոր)

1. Ո՞ր թվականներին է գահակալել Երվանդ IV-ը. 0,5 մ.
 ա) Բ.ա. 580 – 570 թթ. բ) Բ.ա. 570 – 525 թթ.
 գ) Բ.ա. 260 – 240 թթ. դ) Բ.ա. 220 – 201 թթ.
2. Ո՞վ է «Աղվանից աշխարհի պատմություն» աշխատության հեղինակը. 0,5 մ.
 ա) Սեբեոս բ) Ղևոնդ
 գ) Մովսես Կաղանկատվացի դ) Կիրակոս Գանձակեցի
3. Ո՞ր գավառում էր գտնվում Նվարսակ գյուղը. 0,5 մ.
 ա) Ոստան Հայոց բ) Արտազ
 գ) Հեր դ) Կոզովիտ
4. Ովքե՞ր էին գլխավորում Սասունի իշխանությունը X – XII դդ. 0,5 մ.
 ա) Պահլավունիներ բ) Թոռնիկյաններ
 գ) Սեֆեդիյաններ դ) Դոփյաններ
5. Ե՞րբ է Սիսը դարձել Կիլիկյան Հայաստանի մայրաքաղաք. 0,5 մ.
 ա) 1104 թ. բ) 1173 թ.
 գ) 1198 թ. դ) 1292 թ.
6. Քանի՞ օր է տևել 1724 թ. Կարբի գյուղի բնակիչների դիմադրությունը. 0,5 մ.
 ա) 7 բ) 40
 գ) 72 դ) 90
7. Ո՞ր քաղաքում է գումարվել Արևմտահայերի առաջին համագումարը. 0,5 մ.
 ա) Երևան բ) Ալեքսանդրապոլ
 գ) Թիֆլիս դ) Կարս
8. Ե՞րբ է ընդունվել «Թուրքահայաստանի մասին» հրովարտակը. 0,5 մ.
 ա) 1917 թ. դեկտեմբերի 5 բ) 1917 թ. դեկտեմբերի 29
 գ) 1918 թ. մարտի 3 դ) 1918 թ. ապրիլի 9
9. Ե՞րբ է ՀՀ կառավարությունը որոշում ընդունել պետական համալսարան հիմնելու մասին: 0,5 մ.
10. Հայրենական մեծ պատերազմին մասնակցած հայկական ազգային դիվիզիաներից ո՞րն է ամենավաղը կազմավորվել: 0,5 մ.
11. Ո՞վ էր 1918 թ. ստեղծված Երևանյան զորախմբի հրամանատարը: 0,5 մ.
12. Արվեստի ո՞ր ճյուղի ներկայացուցիչ է Արա Սարգսյանը: 0,5 մ.
13. Դասավորե՛ք ժամանակագրական ճիշտ հաջորդականությամբ. 1 մ. (1 սխալի դեպքում՝ 0 մ.)
 ա) Հայրենական Մեծ պատերազմի ավարտը
 բ) ԽՍՀՄ-ի կազմավորումը
 գ) Խորհրդային Հայաստանի առաջին սահմանադրության ընդունումը
 դ) Ստալինգրադի ճակատամարտը
 ե) Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ներկայացուցիչների խորհրդաժողովում Անդրֆեդերացիայի (Անդրդաշնություն) ստեղծելու դաշնային պայմանագրի հաստատումը
 զ) Երկրորդ աշխարհամարտի ավարտը
 է) ԽՍՀՄ գիտությունների ակադեմիայի հայկական մասնաճյուղի ստեղծումը

1	2	3	4	5	6	7

14. Կազմե՛ք համապատասխան զույգեր.

1,5 մ. (6 X 0,25 մ.)

1. Այգեստանի զինվորական մարմին
2. Քաղաքամեջի զինվորական մարմին
3. Շապին Գարահիսարի զինվորական խորհուրդ
4. Մուսա լեռան զինվորական խորհուրդ
5. Ուրֆայի զինվորական խորհուրդ
6. Ինքնավար Կիլիկիայի կառավարություն

1	2	3	4	5	6

- | | |
|-------------------------|----------------------|
| ա. Մկրտիչ Յոթնեղբայրյան | բ. Հայկակ Կոստյան |
| գ. Արմենակ Եկարյան | դ. Միհրան Տամատյան |
| ե. Ղուկաս Տեովլեթյան | զ. Տիգրան Անդրեասյան |

15. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 ճիշտ պնդումները:

1,5 մ. (3 X 0,5 մ.)

- ա) 1920 թ. ապրիլի 25-ին արցախահայության 9-րդ համագումարը որոշում կայացրեց երկրամասը վերամիավորել Հայաստանի Հանրապետությանը:
- բ) 1922-1923 թթ. կիլիկիահայությունը հերոսական դիմադրություն ցույց տվեց քեմալականներին, և Անտանտի երկրների աջակցությամբ հռչակվեց Կիլիկիայի ինքնավարությունը:
- գ) 1920 թ. օգոստոսի 24-ին Մոսկվայում ստորագրված ռուս-թուրքական պայմանագրով Ռուսաստանը չճանաչեց թուրքական «Ազգային ուխտ»-ը և դադարեցրեց ռազմական օգնության տրամադրումը Թուրքիային:
- դ) 1920 թ. դեկտեմբերին և 1921 թ. հունվարին հայկական բանակից հեռացվեցին և երկրից արտրվեցին ավելի քան 1000 (1400) սպաներ:
- ե) 1921 թ. հունվարի 21-ին Հայաստանի Ռազմհեղկումը վերափոխվեց Ժողովրդական կոմիսարների խորհրդի, որի նախագահը դարձավ Ալ. Մյասնիկյանը:
- զ) 1922 թ. դեկտեմբերին Թիֆլիսում ստորագրված հայ-վրացական պայմանագրով՝ Լոռին մնաց Հայաստանի կազմում, իսկ Ջավախքը անցավ Վրաստանին:
- է) ԽՍՀՄ-ի նոր՝ «Ստալինյան սահմանադրությունը», ընդունվել է 1936 թ. դեկտեմբերի 5-ին, իսկ Խորհրդային Հայաստանի նոր սահմանադրությունն ընդունվել է 1937 թ. մարտին:

1	2	3

16. Ընտրե՛ք տերմինների 2 ճիշտ բացատրությունները:

1 մ. (2 X 0,5 մ.)

- ա) Ռուսաստանի ժամանակավոր կառավարության՝ Անդրկովկասը կառավարող երկրամասային մարմինը՝ Անդրկովկասյան արտակարգ հանձնաժողովը (Օզակոմ), ստեղծվել է Թիֆլիսում 1918 թ. մարտի 9-ին:
- բ) XVIII դ. առաջին կեսին Արցախում լեռնային բերդերը, ամրություններն ու ամրացված շրջանները հայտնի էին սղնախներ անվանումով:
- գ) Պարսկաստանում քրիստոնյա ամենահարուստ և ազդեցիկ մարդկանց XVIII դարից սկսած շնորհվել է ամիրա պատվանունը:
- դ) Միևնույն արհեստով զբաղվող վարպետների միությունը կամ կազմակերպությունը արևելահայերի մոտ կոչվում էր համքարություն:
- ե) Օսմանյան սուլթանի անձնական գվարդիայում ծառայող զինվորները, որոնք նախկինում քրիստոնյա գերիներ կամ ստրուկներ էին, հայտնի են մուհաջիրներ անվանումով:
- զ) Պատերազմների ժամանակ ժողովրդից հավաքագրված ոչ արհեստավարժ զորքը, որը կոչվում էր բանակի կազմում, կոչվում է աշխարհագիր:

1	2

17. Տրված տարբերակներից ընտրե՛ք 3 սխալ պնդումները: 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- ա) XVII դ. վերջի և XVIII դ. սկզբի հայ ազատագրական շարժման վերելքը մեծապես կապված է Իսրայել Օրու անվան հետ:
- բ) Ազգայնական գաղափարների տարածումն ու ամրապնդումը հայ իրականության մեջ հանգեցրեց 1880-ական թթ. կեսերից հայ ազգային կուսակցությունների ստեղծմանը:
- գ) 1914 թ. հունվարի 26-ին Կ.Պոլսում Ռուսաստանի դեսպան Ա. Մանդելշտամը կազմում և թուրքական կառավարությանն է ներկայացնում հայկական բարենորոգումների նոր նախագիծ:
- դ) 1840 թ. ստեղծված Երևանի նահանգի մեջ ընդգրկված էին հինգ գավառներ՝ Երևանի, Ալեքսանդրապոլի, Նախիջևանի, Նոր Բայազետի և Չանգեզուրի:
- ե) 1899 թ. գործարկվեց Թիֆլիս-Ալեքսանդրապոլ-Կարս երկաթուղին, իսկ մի քանի տարի անց Ալեքսանդրապոլը երկաթուղով կապվեց Երևանի հետ:
- զ) Բրեստ-Լիտովսկում կնքված պայմանագրով Ռուսաստանը դուրս եկավ Առաջին համաշխարհային պատերազմից:
- է) Խորհրդա-թուրքական 1921 թ. Մոսկվայի, ապա նաև Կարսի պայմանագրերով Նախիջևանը և Սուրմալուն ՀՍԽՀ-ի մաս կազմեցին:

1	2	3

18. Գտե՛ք և ուղղե՛ք սխալը. 1 մ. (2 X 0,5 մ.)
- 987 թ. առաջացած և բավականին երկար գոյատևած Սյունիքի թագավորությունը, որի կենտրոնը սկզբում Սյունի ավանն էր, ապա՝ Կապանը, ամենամեծ վերելքն ապրեց Սմբատ թագավորի օրոք:*
19. Կարդացե՛ք սկզբնաղբյուրից մեջբերումը և պատասխանե՛ք հարցերին. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- «Հողված 1. Հայաստանը հայտարարվում է անկախ Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն:*
- Հողված 2. Մինչև Հայաստանի խորհուրդների համագումարի հրավիրումը կազմավորվում է ժամանակավոր ռազմահեղափոխական կոմիտե, որին անցնում է ամբողջ իշխանությունը Հայաստանում»:*
- ա. Ո՞ր փաստաթղթից է մեջբերված հատվածը:
- բ. Ո՞ր պետությունների ներկայացուցիչներն են ստորագրել այս փաստաթուղթը:
- գ. Ստորագրման պահին ո՞վ էր գլխավորում Հայաստանի կառավարությունը:
20. Լրացրե՛ք տեքստում բաց թողնված հատվածները. 1,5 մ. (3 X 0,5 մ.)
- Հայրենական մեծ պատերազմում կատարած սխրանքներով ռազմական արվեստի պատմության մեջ իրենց անունը ոսկե տառերով գրել են ԽՍՀՄ կրկնակի հերոս, մարշալ-ը (1), ԽՍՀՄ նավատորմի ծովակալ-ը (2), ԽՍՀՄ կրկնակի հերոս, օդաչու-ը (3) և ուրիշներ: Սփյուռքահայությունը ևս ակտիվորեն մասնակցել է Երկրորդ համաշխարհային պատերազմին:*
21. Տրամաբանական խնդիր. 1 մ.
- Եթե Հայկական լեռնաշխարհում հնագիտական պեղումներից գտնված իրը 5000 տարեկան է, նախնադարի կոնկրետ ո՞ր պարբերափուլի (ժամանակաշրջանի) ընթացքում է սրեղծվել:*
22. Աշխատանք Մեծ Հայքի ուրվագծային քարտեզի հետ. 1 մ. (2 X 0,5 մ.)
- ա. Ո՞ր աշխարհն (նահանգն) է գունանշված:
- բ. Ո՞ր աշխարհն է նրան սահմանակցում գրեթե ամբողջ հյուսիսային երկայնքով:



23. Տիգրանյան թագավ Մեծ Հայքի ո՞ր արքայի դիմանկարով դրամն է պատկերված. 0,5 մ.



24. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ (կարդացե՛ք հակիրճ մեկնաբանությունը և պատասխանե՛ք տրված հարցերին). 1 մ. (2 X 0,5 մ.)

19-20-րդ դդ. սահմանագլխի այս ծաղրանկարից կարելի է հասկանալ, որ պատկերված են դաշնակից-միապետներ: Հեղինակը փորձել է ակնարկել, որ, ի թիվս այլ հարցերի, Հայկական հարցի լուծման գործում Օսմանյան կայսրությունը վայելում էր այդ պետության աջակցությունը:

ա. Ո՞վ (ո՞ր միապետն) է պատկերված նկարի ձախ կողմում:

բ. Ո՞ր պետության ղեկավարն է նկարի աջ կողմում պատկերված միապետը:



ա. Ո՞րերորդ դարի քարտեզ է ստորև պատկերված:

բ. Ո՞ր պետությունն է ընդհանուր գունանշված:

10. Հին աշխարհի ո՞ր նշանավոր գործչի արձանն է պատկերված ստորև.

0,5 մ.



11. Աշխատանք պատմական ծաղրանկարի հետ.

1,5 մ. (3 X 0,5 մ.)



ա. Ո՞ր պատերազմին է առնչվում ծաղրանկարը:

բ. Նշե՛ք պատկերված պետական գործիչներից 2-ի անունը և ազգանունը:

Հանրապետական օլիմպիադայի
հանձնաժողովի նախագահ՝

ԵՊՀ հայոց պատմության ամբիոնի դոցենտ,
պատմ. գիտ. թեկնածու Մ. Մալխասյան

09.03.2020 թ.